

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական
երիտասարդական
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման
կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

յուն, հոգևոր առողջ դատողությամբ մտավորականություն, Տեր Հիսուսից կախում ունեցող, Սուրբ Հոգով և իմաստությամբ լցված անաչառ կառավարություն, իշխանություններ, օրինապահ, իրավական պետական և ղեկավար մարմիններ:

Աստծո խոսքը ասում է. «Ամեն ժողովուրդ արժանի է իր թագավորին»: Հնարավոր չէ արդար, օրինական երկրում լինի անօրեն, անարդար կառավարություն, և հակառակը՝ հնարավոր չէ անօրեն երկրում ունենալ արդար թագավոր, կառավարություն:

Աստծո խոսքն ասում է. «Արդարությունը կբարձրացնի մի ազգ, իսկ մեղքը անարգանք է ժողովրդին»:

Մենք հավատում ենք, որ Ավետարանը, Աստծո խոսքը, իրական քրիստոնեական արժեքները կբարձրացնեն մեր ազգը, մեր երկիրը և մեր ժողովրդին...

Որպեսզի Աստծո կենդանի և հավիտենական խոսքն ընկած լինի մեր պետականության հիմքում...

Որ մեր սահմանադրությունը հիմնված լինի Աստծո ճշմարտությունների և սկզբունքների վրա, և մեր երկրում ամենաբարձր տեղում լինի Աստծո ծայնը և Նրա հեղինակությունը:

Այսինքն՝ Տեր Հիսուսը մեր երկրում լինի տերերի Տեր և թագավորների Թագավոր...

Լուսինե Մնացականյան
«Ազատ Հայք» ԲԳԿ

Հայերենի դասական ուղղագրության վերականգնումը պետք է համայն հայությանը

Ողջունելով ներկա գտնվողներին ու շնորհակալություն հայտնելով գիտաժողովի կազմակերպիչներին, ուզում եմ խոսել մի հարցի շուրջ, որը ներառված չէր գիտաժողովի թեմաների շարքում. սակայն, ոչ պակաս հրատապ, կարելի է արդիական հարց է ծառայած ազգային խնդիրներով ապրող ու դրանով մտահոգված երիտասարդության առջեւ ու առավել եւս այն դեռահասների ու պատանիների որոնք պիտի փոխարինեն մեզ:

Արդի ժամանակաշջանում պատմության մատուցած հերթական անակնկալներն ու դժվարությունները, անհամար պրոբլեմները իհարկե կան ու հրատապ լուծում են պահանջում: Շրջադարձային այս փուլում աշխարհաքաղաքական խրթին վայրիվերումների հորձանուտում դի-

մակայելու եւ մեր տեսակը շարունակելու համար, պետք է շրջահայացություն, որպեսզի դուրս չգանք պատմության թատերաբեմից: Առավել քան երբեւէ պետք է գիտակցենք, որ մեր ուժը մեր ամուր, անքակտ միասնության մեջ է, իսկ միասնություն ասվածը լուրջ վերացական գաղափար չէ զեղեցիկ ու հեռավոր, մտածողություն է, հոգեբանություն, աշխարհընկալում՝ հիմնված սեփական ակունքների ճանաչողության վրա, եւ եթե հավատում ենք մեկ ազգ, մեկ մշակույթ, մեկ եկեղեցի կարգախոսին, եւ որ երբեւէ համայն հայությունը պետք է համախմբվի իր հայրենիքում Արարատի շուրջ, ուրեմն այլընտրանք չունենք... Հետեւաբար, խոսել ազգային արժեքներից, ժառանգած հարուստ մշակույթից ու անտեսել հայոց լեզվի դերն ու նշանակությունը դարեր ի վեր մեր ինքնության, մեր գոյության պահպանման հարցում նշանակվում է ուրանալ այն գիտական, մտավոր ներդրումներն ու ազգային անբակտելի արժեքները, որի լիիրավ տերն ու ժառանգորդը պատիվ ունենք համարել մեզ:

Լեզվի պատմությունն այն կրող ժողովրդի պատմությունն է պատմական գիտակցության ճանապարհին մտածողություն, հոգեբանություն ծեւավորող փիլիսոփայություն, կյանքի ու պայքարի, դարավոր երազների խոսուն վկան: Մեր լեզվի արմատները թաղված են դարերի խորության մեջ, այն մեր բազմադարյա բունը հողին կապող, սաղարթը սնուցող գլխավոր երակը դարձավ, պաշտպանեց, սնուցեց ու կանգուն պահեց եւ մեզ որպես ինքնուրույն տեսակ ներկայանալի դարձրեց: Սահարթն ու շիվերը անցողիկ են, թե հեռանալով արմատներից, կղաղարենք ինքնուրույն տեսակ, դեմք-դիմագիծ ունեցող ժողովուրդ լինելուց: Մենք ենք տերը մեր տան, մեր հայրենիքի, օրինական ու լիիրավ ժառանգն այն մշակույթի, որ նշխարի պես պահպանել ու փոխանցել են մեզ այն մարդիկ, որոնք ապրել են այստեղ, մտածել ու արարել են, ստեղծել արժեքներ: Ու մենք, մեր պատկանական ժառանգականության իրավունքով պիտի տերը լինենք նրանց նպատակների ու երազանքների, որ երբեւէ մեզ էլ հիշեն որպես նախնի իր նախնիներին արժանի:

Այս է դարավոր խորհուրդը մեր լեզվի: Այն, որպես մեր պատմության մաս, մեզ միասնության է կոչում:

Հայոց ինքնության ամենագորեղ հիմքը հանդիսանալով, քաղաքական ու հասարակական դժվար պայմաններում օգնեց դիմագրավել ժամանակների փորձություններին, քանզի հանճարի միտքը ծնունդ տվեց մի ուղղագրության, որ դարեր ի վեր անփոփոխ ծառայեց իր կոչ-

մանը, ու պետականություն չունենալով հանդերձ հայրենիք ունեցանք, երբ մասնատվածության պայմաններում միասնական մնացինք կառուցած մեր արմատներին, մեր հողին ու ջրին: Դարեր շարունակ մասնատված հզոր պետությունների միջև, օտար նվաճողների լծի, նախարարական տների եսակենտրոն քաղաքականության ճնշումների ներքո, չունեինք ձուլման վտանգի ավելի մեծ հավանականություն, քան հիմա, երբ ունենք մեր պետությունը, որտեղ ցավոք խաթարված է ճանապարհը միասնության, ուր սաղարթն այլևս չի սնվում արմատից: Մենք միշտ բողոքել ենք մեր բախտից դասեր չքաղելով պատմությունից: Մինչդեռ, այդ մի Մաշտոց անունով, իմաստությունն ու խրատը ճանաչել, հանճարի խոսքն իմանալ պատգամեց եւ գրի, ուղղագրության միջոցով ցույց տվեց միասնության ճանապարհը: Ու պահպանեցինք մեր միասնությունը, երբ միասնական չէր հայրենիքը, մեր երկրանք պահեցինք մեր ինքնությունը եւ այնքան բաղձալի անկախ հայրենիքում կորցնում ենք մեր երկրները, որովհետեւ օտարելով մեր արմատները, հեռանում ենք մեր բազմադարյան մշակույթից, փակում մեր արմատներին կապող ճանապարհը:

Դեռես 4-րդ դարում, երբ օտար մշակույթի ազդեցությունը դանդաղան սրի պես կախված էր հայության գլխին, արմատական շրջադարձ կատարվեց հայ ժողովրդի պատմության, հայ մարդու հոգեբանության, ազգային ինքնագիտակցության մեջ: Երկու մասի բաժանված Հայաստանի արեւմտյան ու արեւելյան հատվածները օտար մշակույթի, օտար բարբերի ազդեցիկ ճնշումների ներքո տնտեսական, քաղաքական ու մշակութային անկման շեմին միմյանցից օտարանում էին, երկրի, ժողովրդի ամբողջությանը սպառնում էր ձուլման վտանգը: Հայերը մշակութապես ենթարկվել էին հույների եւ ասորիների ազդեցությանը, որը զնալով ավելի կործանարար էր դառնում: Պետականորեն ընդունելով քրիստոնեությունը՝ ժամանակի հայ մտավորականությունը շատ լավ հասկանալով դա, կարողացավ ազատել հայ ժողովրդին օտար մշակույթի ազդեցությանը ենթարկվելու, սեփական լեզուն մոռանալու վտանգից ու հարթել հայ գրականության ու մշակույթի զարգացման ուղիները: Ժամանակները փոխվում են, պատմությունը ոչ: Եւ ասիւ, 20-րդ դարը եւս նշանավորվեց մեր պատմության հերոսական ու ողբերգական անցքերով, ու մշակութային բազում նվաճումների կողքին արձանագրվեց նաեւ անկում, որ կտրեց հայաստանահայությանը իր արմատներից, սփյուռքահայությանը հայրենիքից: Խորհրդային իշխանության քաղաքական ու գաղափարական համակարգի քարոզչություն-

նը բարելոնաշինության խառնակցությամբ ընթացավ ազգային մշակույթները օտարելու ճանապարհով եւ բոլշեւիկյան գաղափարախոսությունը առավել արդյունավետ տարածելու համար ասորական սցենարով իրականացրեց մշակութային ջարդ: Հեռահար նպատակ հետապնդելով թույլ չտալով, որ աշխարհի բոլոր հայերը գրեն ու կարդան մեկ ուղղագրությամբ խզել հարազատական կապը սերունդների եւ պատմության միջև: Համընդհանուր փոփոխությունների հետ «հին» որակվեց, փոփոխության ենթարկվեց նաեւ դարեր ի վեր միասնականության հիմք հանդիսացող մեսրոպյան ուղղագրությունը, որի հրաշագործ զորությամբ շուրջ 1600 տարի քաղաքականապես անջատ հայության երկու հատվածները պահպանեցին մշակութային միասնություն միասնական ուղղագրության ու գրական լեզվի նույնության շնորհիվ: Արմատախիլ արվեց գրական հարուստ ժառանգությամբ մշակութային ավանդույթներ ու արժեքներ ունեցող լեզուն՝ ազգային գաղափարներով հանդերձ:

Ու ի՞նչ ունենք հիմա. դարերով փայփայած, պապերի քրտինքով ու արյամբ թրծված երազանք հայրենիք, հայրենիք գտած, բայց իրենց ակունքներից հեռացած հայություն, եւ աշխարհով մեկ սփռված ու իր արմատներին անուր կառչած հայություն: Օտարի քմահաճ կամքով, մենք մեր ձեռքով մեզ դարձրինք պատմություն կորցրած, անցյալից օտարված երկիր ու արդյունքում ունենք սերունդ, որ չի ճանաչում ու չի առնչվում անցյալի իր գրականությանն ու մշակույթին: Դպրոցներում աշակերտների գերակշիռ մեծամասնությունը, նույնիսկ ուսումնական ծրագրի շրջանակներում, չեն կարողում արեւմտահայերեն կամ դասական ուղղագրությամբ գրված գրականություն, դրանով իսկ ենթարկվելով օտար մշակույթի ու բարբերի, արժեզրկված արժեքների ազդեցությանը՝ կանգնում ձուլման վտանգի առաջ: Ժառանգած հնամյա գրական հարուստ մշակույթին անտեղյակ, պապենական տեսակին խորթացած, փորձում են նմանակել, ընդօրինակել օտարինը արդյունքում անորակ խեղկատակությունը մատուցվում է որպես մշակույթ, ահավասիկ ամեն օր լսում ու դիտում ենք հեռուստատաղիո հաղորդումներ հաղորդավարների սերտած «նորաժ» ու տխմար հունորներով, փուչ նորամուծություններով լեզուն:

Անշուշտ, ուղղագրությունը նորածեւություն , գիտություն ու տեխնիկա չէ, որ անընդհատ փոփոխվի, զարգանա, առավել եւս հարմարեցվի որոշակի ընթացումների ու ճաշակի: Բոլոր լեզուներում էլ կարող են ուղղագրական փոփոխություններ կատարվել, բայց

ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ փոխվում է ինքը՝ լեզուն: Դենց՝ գրաբարում ալ երկաբարառը որոշ դեպքերում սկսեց գրվել եվրոպական օ-ով: Հայերենի ուղղագրության փոփոխությունը նախորդ դարասկզբին անհրաժեշտությունից չի բխել, հետեւաբար կնշանակի եղել է կանայականություն, պարտադրանք, հիմքում երկպառակտության տանող նրբորեն հյուսված որոգայթ: Անցկացրել ենք տասնամյակներ չնկատելով այն ահռելի անջրպետը, որ առաջանում է մեր մեջ եւ մեր շուրջ, /առկա գրական ժառանգության, եւ աշխարհասփյուռ հայության/ այն, ինչ այսօր ակնհայտ է...

Եթե այսպես ենք գնահատում մեր նախնիներին՝ Նարեկացուն, Խորոնացուն, Քուչակին, Թումանյանին, Տերյանին, Րաֆֆուն, Նար-Դոսին, Չարենցին, Բակունցին եւ մյուսներին. ուրեմն ինչու ենք աղմկում, երբ արնոտ բերանով աղբբեջանցի գազանը ավերում ու պղծում է մեր պապերի շիրիմներն ու թողած նյութական մշակույթի մնացորդները, երբ ինքներս մոռացել ու չենք պաշտպանում արյուն քրտինքով թրծված մեր հոգեւոր մշակույթի թանկարժեք գանձը:

Այն է մեծ ցավը, որ գրքերի շտեմարանը /ինչպես այսօր Մատենադարանը/ վերածվել է թանգարանի... ասում են, Հերոստրատն այրեց Արտեմիսի տաճարը՝ պատմության մեջ հավերժ հիշվելու համար: Իսկ - գուցե ա՛յլ էին պատճառները, գուցե պատմիչնե՞րն են միտումնավոր կեղծել պատմությունը կոծկելու ժամանակին թույլ տված իրենց սխալները: Սխալները պետք է ուղղել, քանզի պատմությունը դրանք չի ներում: Իսկ ի՞նչ կարծեման մեր սխալները, եթե չպաշտպանենք ու չպահպանենք արյուն-քրտինքով վաստակած մեր մշակույթի թանկարժեք գանձը: Այն, ինչ դարերի կնիքն ունի, թրծված է հայոց մտածողության քուրայում, չի կարող սխալ լինել: Հայ լեզուն հայ ժողովրդի գոյության, ինքնուրույնության, տարբեր ազդեցություններից նրան ազատելու ու հոգեւոր բնութագրի պահպանման, աշխարհասփյուռ հայության միավորման, հայ մշակույթի զարգացման ու բարգավաճման բնագավառում կատարել է իր մեծ, անգնահատելի դերը ժողովրդի մեջ ձեւավորել մշակութապես օտարից անջատվելու ձգտում: Այն հայության տարբեր հատվածները միմյանց հետ կապող, կենտրոնախույս ձգտումները վերացնող հիմնական միջոցներից մեկն է եղել:

Մեր լեզվում բարբառային ընդհանրությունները միշտ հանդիսացել են գրական հայերենի տարբեր փուլերի ձեւավորման ու զարգացման նախադրյալներ: Իսկ հիմա բարեփոխումների անվան տակ իրարից այնքան են հեռացել գրական երկու լեզուները, որ մշակութային

ահռելի ճեղքվածք է առաջացել... այն, ինչն է սկզբանե կոչված էր միավորելու, պարզվում է այսօր խանգարում է միասնական, ամուր հայրենիք կառուցելուն, չի ծառայում այլեւս իր նպատակին:

Հայերենը պետք է ունենա մի ուղղագրություն, այն, որով սկզբնավորվեց մեր լեզվի գրավոր շրջանը: 15 դար գործածված ուղղագրությունը, ամրագրել է հսկայական մշակույթ, ուստի մեսրոպյան կամ դրա հիման վրա առաջ եկած դասական ուղղագրությունն իմանալ, նշանակում է տեր դառնալ հայատառ ամեն գրության: Որպեսզի վերածնվի գրավոր խոսքի մեր գանձարանը, յուրաքանչյուր հայ պիտի հատու լինի իր նախնյաց ժառանգության ուսումնասիրմանը: Կան իհարկե խոչնդոտներ: Գործող ուղղագրությունից անցումը դասական ուղղագրության մտավախություն է առաջ բերում, թե այն սպառնում է 70 տարիների մշակույթի կորստով ու անգրագիտությամբ, որը հոգեբանական լուրջ զործոն է, ուստի պետք է մշակել այնպիսի մարտավարություն, որը զոհն կմեղմացնի փոփոխության դեպքում անգրագետ մնալու վախը: Այն է, հիմնվեն կրթական կենտրոններ, կազմակերպվեն դասընթացներ, որպեսզի յուրաքանչյուր ոք իմանա, որ ցանկության դեպքում, ցանկացած ժամանակ կկարողանա լրացնել իր գիտելիքների պակասը ուղղագրության հարցում: Վերջ ի վերջո 1922թ. երբ չարաբաստիկ դեկրետով հայտարարվեց ուղղագրական փոփոխությունների մասին, համայն հայությունը չվերցրեց ու միանգամից չսկսեց գրել նոր ուղղագրությամբ: Ընդհակառակը իմ պապը ծնվել էր 1906թ. տատս 1912-ին, մեր տանը, դեռեւս պահպանվում են նոթատետրեր, նամակներ, եւ նա միշտ մտածել են, «Չէ՛ որ նրանք կրթություն են ստացել խորհրդային կարգերի հաստատումից հետո եւ ուսյալ մարդիկ են համարվել, ինչու են՞ այդքան «սխալներով» գրել»: Ինչ՞ է ստացվում, եթե մինչ 1922թ. գրել են սխալ ուղղագրությամբ եւ միայն խորհրդային «հայերենը» ավելի սատչելի, գաղափարապես ու քաղաքականապես միակ ճիշտ ուղղագրությունը դարձավ, ապա ինչու նաեւ շատ-շատերը համառորեն չընդունեցին նոր ուղղագրության նոր կանոնները:

Հայերենը իր ուղղագրությամբ մեր մշակույթի գլխավոր բաղկացուցիչ մասն է: Լեզուն խորհրդանիշ չէ, այլ պետության, պետականության իմաստը, ու ժամանակն է, որ կշռադատենք մեր յուրաքանչյուր քայլը, գիտակցենք մեր լավն ու վատը ելնելով ազգային շահերից: Ու եթե հիմն ավելի զորավոր է ու ճիշտ, ուրեմն պետք է վերադառնալ դրան, քանզի մենք ենք հետնորդն այն միության, որ Հայկը հիմնեց, մենք ենք

ժառանգը պետության, որ Հայք կոչվեց, ու թե մենք չէ, էլ ո՞վ պիտի տերը լինի մեր արմատի ու ակունքի, մեր պապերի երազանքի:

Լիանա Մինասյան
«Միասնություն» ՄՄԵԿ

Չայնավորների հնչյունափոխությունը Մարտունու շրջանի մանրատեղանուններում

Հնչյունափոխությունը լեզվի զարգացման ներքին օրինաչափություններից մեկն է, որ միշտ ուղեկցում է լեզվին վերջինիս կենդանի գոյության ողջ ընթացքում:

Հնչյունափոխության հետեւանքները բազմազան են, որոնք առաջանում են երկու գործոնի շնորհիվ հնչյունի գրաված դիրքի եւ հնչյունաշարքում միմյանց վրա թողած փոխազդեցության: Ավարտված դիրքային, փոխազդեցական հնչյունափոխությունները վեր են ածվում պատմականի:

Արցախի Մարտունու շրջանի մանրատեղանունների կազմում հանդես եկող բաղադրիչներն զգալի առանձնահատկություններ ունեն ընդհանուր-պատմական (տարածամանկյա) հնչյունափոխության տեսակետից: Գրաբարի համեմատությամբ զգալի փոփոխություններ են կրել հնչյունները բառի բոլոր դիրքերում բաց, փակ, շեշտակիր եւ շեշտազուրկ վանկերում, միավանկ եւ բազմավանկ բառերում: Այդ փոփոխությունները հիմնականում պայմանավորված են լեզվի մեջ գործող տարբեր օրենքներով, ինչպես նաեւ արտասանության ուժգնացմամբ եւ թուլացմամբ:

ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԿՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրաբարյան *ա* ձայնավորը մանրատեղանունների միավանկ եւ մեկուկես վանկանի բաղադրիչներում մնացել է անփոփոխ, ինչպես՝ *արտ>արտ* (*Պառապ արտ*), *ծառ>ծառ* (*Պրրիվածառ*), *արջ>արջ* (*Արչէն պառակ*), *հարթ>հարթ* (*Շէխու հարթ*), *կալ>կալ* (*Լըղարեն կալ*), *քար>քար* (*Վլարմուր քար*), *խաչ>խաչ* (*Քօլեն խաչ*), *թաղ>թաղ* (*Գյունէ թաղ*), *ժամ>ժամ* (*ժամ*), *վանք>վանք* (*Շուքա վանք*), *բաջ(ր)>բաշկը* (*Քաշկա ծօր*), *սար>սար* (*Փլեկ սար*), *ակն>ակնը* (*Աօշին ակնը*), *խաղ>խաղ* (*խաղ ընելի արտ*) եւ այլն:

Երկվանկ բառերում ա-ն մնացել է նույնը, ինչպես՝ *մարագ>մարաք* (*Ջարգձ մարաք*), *պառաւ>պատալ* (*Պառապ արտ*),

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
*Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,*

